ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Հավելված
Հաստատվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի
2021թ. -ի թիվ որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ **5**

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ **5**

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ **5**

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ **6**

IV. ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ **8**

V. 2021 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐՈՒՄ ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԼՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ **16**

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 17

2. ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ 18

3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 18

4. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 20

5. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ (COVID-19) ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ 23-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ 20

6. ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ 20

7. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ 21

8. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ 21

9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ 21

10. ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ 22

11. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ 5-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ 22

VI. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ **23**

VII. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ **23**

VIII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ **23**

Հավելված
Հաստատվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի
2021թ. -ի թիվ որոշմամբ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 11-ի թիվ 134-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ պետական եկամուտների կոմիտե:
Հաշվեքննության առարկան	ՀՀ պետական եկամուտների կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215 որոշում, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշում, «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ» և այլ իրավական ակտեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի մայիսի 19-ից մինչև 2021 թվականի հուլիսի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական

և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ութերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Արմեն Գևորգյանը:

Հավելված
Հաստատվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի
2021թ. -ի թիվ որոշմամբ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՊԵԿ ՀՀ պետական եկամուտների կոմիտե

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեում հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 11-ի թիվ 134-Ա որոշման հիմքով:

Հաշվեքննության առաջադրանքով նախատեսվել է իրականացնել Կոմիտեի 2020 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննությունն իրականացվել է 2021 թվականի փետրվարի 16-ից մինչև 2021 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 8-րդ վարչության կողմից:

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվեքննության իրականացման համար ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեին վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

Հավելված
Հաստատվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի
2021թ. -ի թիվ որոշմամբ

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից ՊԵԿ կողմից կատարվող ծախսերի երեք ամիսների պլանը սահմանվել է 25,073,466.1 հազ.դրամ, տարեկան ճշտված պլանը՝ 35,082,451.2 հազ. դրամ: Ֆինանսավորումը՝ 32,167,771.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 32,010,581.9 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 33,893,784.2 հազ.դրամ:

ՀՀ ՊԵԿ 2021 թվականի երեք ամիսների բյուջեի ծախսերի կատարողականը ըստ միջոցառումների հետևյալն է.

(հազ.դրամ)

Միջոցառում Հոդված		Հաշվետու ժամանակա հատվածի ճշտված պլան	Ֆինանսա վորում	Փաստ	Փաստացի ծախս	Կատար ման %-ը	Պլանի մնացորդ
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		35,082,451.21	32,167,771.01	32,010,581.87	33,893,784.23	91.24	2,914,680.20
01010201	Հարկային և մաքսային ծառայություններ	3,778,665.40	3,478,513.12	3,332,878.61	4,168,420.64	88.20	300,152.28
	Աշխատանքի վարձատրություն	2,941,547.00	2,941,547.00	2,800,348.22	3,515,700.31	95.20	-
	Ապրանքների, ծառայությունների ձեռքբերում և այլ ծախսեր	837,118.40	536,966.12	532,530.39	652,720.33	63.61	300,152.28
01010203	Ակցիզային դրոշմանիշների ձեռքբերում	1,163,232.00	-	-	166,049.07		1,163,232.00
01010206	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում	75,922.00	-	-	84,151.99		75,922.00
	- Վարչական սարքավորումներ	-	-	-	84,151.99		-
	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	75,922.00	-	-	-		75,922.00
	- Ոչ նյութական հիմնական միջոցներ	-	-	-	-		-
01010207	Դրոշմապիտակների ձեռքբերման ծախսեր	1,360,800.00	-	-	798,081.47		1,360,800.0
01010215	Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ	4,570.49	4,570.49	4,570.49	4,570.49	100.0	-
01060104	Փորձաքննությունների ծառայություններ	1,084.70	320.85	320.85	320.85	29.58	763.85
04010114	Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման 23-րդ միջոցառման շրջանակներում իրականացվող աջակցության տրամադրում	1,124,700.00	1,124,700.00	1,114,680.92	1,114,680.92	99.11	-

Հավելված
Հաստատվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի
2021թ. -ի թիվ որոշմամբ

04090120	ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	26,328.38	26,328.38	26,328.38	26,328.38	100.0	-
09050211	Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման ծառայություններ	35,620.00	35,620.00	35,620.00	31,990.90	100.0	-
10020110	Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդնում	22,383,434.00	22,373,131.93	22,372,642.38	22,372,642.38	99.95	10,302.07
10090201	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	35,760.00	32,252.00	31,206.00	31,206.00	87.27	3,508.00
10090232	Փոխանցումներ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամին	5,092,334.24	5,092,334.24	5,092,334.24	5,092,334.24	100.0	-
11010101	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	-	-	-	3,006.90	-	-

IV. ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

«ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով 2021 թվականի պետական բյուջեի եկամուտները նախատեսվել են 1,509,462,935.9 հազ. դրամ, իսկ երեք ամիսների համար ՀՀ կառավարության 2020 թվականի 30 դեկտեմբերի N 2215-Ն որոշմամբ հաստատված եռամսյակային համամասնություններով՝ 319,535,115.7 հազ դրամ (կամ 21.1%):

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի եկամուտների ծրագրային և 2019, 2020 թվականների ժամանակաշրջանների համադրելի փաստացի ցուցանիշները հետևյալն են՝

(Աղյուսակ 1)

Եկամտատեսակը	2019թ.		2020թ.		2021թ.	
	մլրդ դրամ	%-ը	մլրդ դրամ	%-ը	մլրդ դրամ	%-ը
Ընդամենը, որից՝	**1,565.5**	100.0 %	**1,560.6**	100.0%	**1,509.5**	100.0%
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	**1,464.3**	93.5%	**1,385.2**	88.8%	**1,440.1**	95.4%
2. Պաշտոնական դրամաշնորհներ	**12.4**	0.8%	**53.2**	3.4%	**24.3**	1.6%
3. Այլ եկամուտներ	**88.8**	5.7%	**122.2**	7.8%	**45.1**	3.0%

«Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշման 1-ին կետի 11-րդ ենթակետի պահանջներով պայմանավորված՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ցուցանիշներում առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները և վերջիններիս արդյունքում ձևավորված եկամուտները պետական բյուջեի ցուցանիշներում ներառելու հանգամանքով պայմանավորված, ինչպես նաև ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունները հաշվի առած՝ պետական բյուջեի եկամուտների տարեկան և եռամսյակային ճշտված ծրագրային

Հավելված
Հաստատվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի
2021թ. -ի թիվ որոշմամբ

ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 1,521.8 մլրդ դրամ և 330.2 մլրդ դրամ:

2021 թվականի տարեկան և երեք ամիսների եկամուտների ծրագրային (ճշտված) ցուցանիշների և փաստացի կատարողականի տվյալները հետևյալն են.

(Աղյուսակ 2)

մլրդ.դրամ

	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Երեք ամիսների պլան	Երեք ամիսների ճշտված պլան	Երեք ամիսների փաստ	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Կատարման %-ն երեք ամիսների ճշտված պլանի նկատմամբ
Պետական բյուջեի եկամուտները	**1,509.5**	**1,521.8**	**319.5**	**330.2**	**349.3**	**23.0%**	**105.8%**
այդ թվում՝							
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	**1,440.1**	**1,445.3**	**305.0**	**310.2**	**332.9**	**23.0%**	**107.3%**
Պաշտոնական դրամաշնորհներ	**24.3**	**25.7**	**5.2**	**9.0**	**1.2**	**4.8%**	**13.7%**
Այլ եկամուտներ	**45.1**	**50.8**	**9.3**	**11.0**	**15.2**	**29.8%**	**137.6%**

2021 թվականի երեք ամիսների պետական բյուջեի փաստացի եկամուտները (349.3 մլն դրամ) կազմել են երեք ամիսների ճշտված ծրագրով կանխատեսված ցուցանիշի (330.2 մլն.դրամ) 105.8%-ը, որից հարկային եկամուտների և պետական տուրքերի փաստացի մուտքերը (332.9 մլն դրամ) կազմել են ճշտված ծրագրային ցուցանիշի (310.2 մլն դրամ) 107.3%-ը:

2020 թվականի առաջին եռամսյակի համեմատ պետական բյուջեի եկամուտները նվազել են 5.7%-ով կամ 21 մլրդ դրամով:

Պետական բյուջեի եկամուտների 95.3%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի, 0.4%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների, 4.3%-ը՝ այլ եկամուտների հաշվին:

2021 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 332.9 մլրդ դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր, որոնք կազմել են առաջին եռամսյակի ծրագրային ցուցանիշի 107.3%-ը:

2020 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հարկային եկամուտներն ու պետական տուրքերը նվազել են 4.6%-ով կամ 16.1 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է շահութահարկի, ակցիզային հարկի, ավելացված արժեքի հարկի,

ինչպես նաև պետական տուրքերի գծով մուտքերի նվազմամբ: Միևնույն ժամանակ, աճել են սոցիալական վճարի, բնապահպանական հարկի ու բնօգտագործման վճարների, այլ հարկերի և մաքսատուրքի մուտքերում, որոնք համապատասխանաբար 72.4%-ով, 38.8%-ով, 52%-ով և 16.4%-ով գերազանցել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշները:

ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների 2021թ. երեք ամիսների և նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատական ցուցնիշները հետևյալն են՝

Աղյուսակ 3
(մլն.դրամ)

Հ/Հ	Ցուցանիշ	2020թ.			2021թ.		
		Հունվար-մարտ	տեսակ. կշիռը	Աճի տեմպը %	Հունվար-մարտ	տեսակ. կշիռը	Աճի տեմպը %
1	2	3	4	5	6	7	8
1	**Ընդամենը վճարված հարկային եկամուտներ և պետական տուրք**	322 000,7	X	110,0	319 663,0	X	99,3
1.1	ՀՀ պետական բյուջե հաշվեգրված հարկային եկամուտներ և պետական տուրք	349 034,4	100,0%	116,5	332 894,9	100,0%	95,4
1.1.1	ԱԱՀ, այդ թվում՝	119 340,2	34,2%	108,3	116 678,8	35,0%	97,8
1.1.1.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապ րանքների համար	24 631,5	7,1%	119,4	23 500,7	7,1%	95,4
1.1.2	Շահութահարկ	37 885,4	10,9%	194,3	24 283,9	7,3%	64,1
1.1.3	Եկամտային հարկ (ներառյալ եկամտահարկ և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ)	109 431,3	31,4%	114,3	108 859,9	32,7%	99,5
1.1.4	Ակցիզային հարկ, այդ թվում՝	27 211,0	7,8%	116,3	18 505,4	5,6%	68,0
1.1.4.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	3 879,0	1,1%	93,1	3 695,6	1,1%	95,3
1.1.5	Շրջանառության հարկ	8 931,0	2,6%	120,3	7 690,1	2,3%	86,1

1.1.6	Արտոնագրային հարկ	20,1	0,0%	1,8	-3,5	0,0%	-17,3
1.1.7	Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	7 956,4	2,3%	113,2	11 040,6	3,3%	138,8
1.1.8	Մաքսատուրք, այդ թվում՝	16 872,6	4,8%	90,0	19 634,4	5,9%	116,4
1.1.8.1	ԵՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված	16 510,1	4,7%	98,2	19 611,5	5,9%	118,8
1.1.9	Սոցիալական վճար	5 828,1	1,7%	122,3	10 049,1	3,0%	172,4
1.1.10	Այլ հարկային եկամուտներ	5 819,1	1,7%	147,8	8 892,1	2,7%	152,8
1.1.11	Պետական տուրք	9 874,0	2,8%	122,7	7 283,6	2,2%	73,8
1.1.12	Հարկերի անցումային գերավճար	-134,7	-	-	-19,6	-	-
1.2	Միասնական հաշվի մնացորդ (շարժ)	-27 033,7	-	-	-13 231,9	-	-

2021 թվականի երեք ամիսներին, ըստ ՊԵԿ կողմից ներկայացված հաշվետվության, ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 332.9 մլրդ. դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր, որոնք կազմել են երեք ամիսների ծրագրային ցուցանիշի 107.3%-ը: 2020 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հարկային եկամուտներն և պետական տուրքերն նվազել են 4.6%-ով կամ 16.1 մլրդ դրամով:

2021 թվականի երեք ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի կառուցվածքն ըստ եկամտի տեսակների հետևյալն է.

- 35.0 %-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին՝ կազմելով 116.7 մլրդ. դրամ, որից 62.5 մլրդ դրամը ստացվել է ՀՀ ներմուծվող ապրանքներից, այդ թվում՝ 23.5 մլրդ դրամը գանձվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ներմուծվող ապրանքների համար: Մնացած 54.2 մլրդ դրամը գանձվել է ՀՀ-ում արտադրվող ապրանքներից և ծառայություններից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացված արժեքի հարկի մուտքերը նվազել են 2.2%-ով կամ շուրջ 2.7 մլրդ դրամով:

- 32.7%-ը ապահովվել է եկամտային հարկի հաշվին՝ կազմելով 108.9 մլրդ. դրամ, այն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 0.5 տոկոսով կամ 566.1 մլն դրամով:

- 7.3 %-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 24.3 մլրդ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն նվազել է 35.9 տոկոսով կամ 13.6 մլն դրամով:

- 5.6 %-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով 18.5 մլրդ դրամ, որից հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 9.1 մլրդ դրամ, հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 9.4 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերը նվազել են 32%-ով կամ 8.7 մլրդ դրամով, որը պայմանավորված է հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների գծով մուտքերի 49%-ով (8.7 մլրդ դրամով) նվազմամբ: Միաժամանակ, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ներմուծվող ենթաակցիզային ապրանքների գծով մուտքերն աճել են 0.2%-ով (21 մլն դրամով):
- 5.9 %-ն ապահովվել է մաքսատուրքի հաշվին՝ կազմելով 19.6 մլրդ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն աճել են 16.4%-ով կամ շուրջ 2.8 մլրդ դրամով:
- 3.3 %-ը ապահովվել է բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների հաշվին՝ կազմելով 11 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 38.8%-ով կամ շուրջ 3.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիի գծով մուտքերի 83.5% (4.2 մլրդ դրամով) աճով:
- 3.0 %-ը ապահովվել է սոցիալական վճարի հաշվին և կազմել է 10.0 մլրդ դրամ՝ 72.4%-ով կամ 4.2 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում դրույքաչափերի և համախառն եկամտի առավելագույն չափի բարձրացմամբ:
- 2.3 %-ը ապահովվել է շրջանառության հարկի հաշվին՝ կազմելով 7.7 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շրջանառության հարկի մուտքերը նվազել են 13.9%-ով կամ ավելի քան 1.2 մլրդ դրամով:
- 2.7%-ը ապահովվել է այլ հարկերի հաշվին՝ կազմելով 8.9 մլրդ դրամ, մասնավորապես՝ շուրջ 5.6 մլրդ դրամ են կազմել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարները, 1.7 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, 681.8 մլն դրամ՝ ճանապարհային հարկը, 521.9 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար սահմանված տուգանքները, 255.9 մլն դրամ՝ ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների համար ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձվող միասնական մաքսային վճարը, 213.1 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ

հարկերի փաստացի ցուցանիշն աճել է 52%-ով կամ 3 մլրդ դրամով: Աճն արձանագրվել է հիմնականում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարների գծով՝ պայմանավորված 2021 թվականի հունվարի 1-ից օրենքում կատարված փոփոխությունների համաձայն դրոշմանիշային վճարների դրույքաչափերի բարձրացմամբ:

- Հաշվետու ժամանակահատվածում հարկերի անցումային գերավճարից միասնական հաշիվ փոխանցված գումարը կազմել է 19.6 մլն դրամ՝ նախորդ տարվա 134.7 մլն դրամի դիմաց:

- 2.2%-ը ապահովվել է պետական տուրքերի հաշվին և կազմել են 7.3 մլրդ դրամ՝ կազմելով հաշվետու ժամանակաշրջանի ծրագրային ցուցանիշի 82.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների, պետական գրանցման և լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար սահմանված պետական տուրքերի կատարողականով: Նշված մուտքերը կազմել են համապատասխանաբար 2.6 մլրդ դրամ, 1.1 մլրդ դրամ և 1.9 մլրդ դրամ կամ առաջին եռամսյակի ծրագրային ցուցանիշների համապատասխանաբար 69.1%-ը, 77.6%-ը և 92%-ը:

Մասնավորապես՝ օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձվող պետական տուրքերի խմբում 50.4% տեսակարար կշիռ ունեցող՝ ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար մուտքերը 50.4%-ով (1.3 մլրդ դրամով) զիջել են կանխատեսված և 47.1%-ով (շուրջ 1.2 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները՝ կազմելով 1.3 մլրդ դրամ: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ պետական տուրքի գծով մուտքերը նվազել են 26.2%-ով կամ 2.6 մլրդ դրամով: Մասնավորապես, զգալի անկում է արձանագրվել լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող տուրքերի գծով գծով՝ 40.5%-ով (1.3 մլրդ դրամով), օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված տուրքերի գծով՝ 32%-ով (1.2 մլրդ դրամով), պետական գրանցման համար գանձված տուրքերի գծով՝ 19.1%-ով (265.6 մլն դրամով): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճ է արձանագրվել դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու ու հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող տուրքերի գծով, որոնք համապատասխանաբար 26.8%-ով (126 մլն դրամով) և 16.6%-ով

(76 մլն դրամով) գերազանցել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշները:

Համաձայն ՀՀ ՊԵԿ կողմից հրապարակված հաշվետվությունների, ՊԵԿ կողմից հաստատված եզրակացությունների համաձայն 2021թ. երեք ամիսների և նախորդ համադրելի ժամանակաշրջանի ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի, բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված (այդ թվում հարկային ուսումնասիրությունների արդյունքում) և ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով վերադարձված գումարների, ինչպես նաև վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գծով համադրելի ցուցանիշները հետևյալն են՝

Աղյուսակ 4
(մլն.դրամ)

Հ/Հ	Ցուցանիշ	2020թ.	2021թ.	
		Հունվար-մարտ	Հունվար-մարտ	Աճի տեմպ %
1	2	3	4	5
1	ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումար	17 927.2	16 275.8	90.8
2	Հաշվետու կիսամյակին և եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի գծով, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումար	13 792.1	16 366.6	118.7
3	ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումար	86.2	69.7	80.9
4	Վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գծով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված վճարման հանձնարարականների հանրագումար	2 796.6	4 571.3	163.5

5	**ԸՆԴԱՄԵՆԸ**	34 602.2	37 283.4	107.7

2021թ. երեք ամիսներում ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումարները կազմել են 16 275.8 մլն դրամ, որը նախորդ համադրելի ժամանակաշրջանի ցուցանիշից պակաս է 9.2 տոկոսով, իսկ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ ավելի է 18.7 տոկոսով: ԱԱՀ-ի վերադարձի հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ նվազել է 19.1 տոկոսով:

Վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ աճել է 63.5 տոկոսով:

2021 թվականի երեք ամիսներում ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների մասով ՀՀ պետական բյուջե վճարված հարկային եկամուտներն ու պետական տուրքերն ըստ եկամտային հաշիվների և ծախսային ուղղությունների հետևյալն է.

Աղյուսակ 5
(հազ.դրամ)

Բյուջե մուտքերն ըստ եկամտային հաշիվների.

Ժամանակահատված	Հարկերի միասնական հաշվից բյուջե մուտքեր	Այլ հաշիվներից բյուջե հարկային մուտքեր	Մաքսային ծառայության կողմից գանձված գումարներ	Ընդամենը բյուջե հաշվեգրված եկամուտներ
Ընդամեն	**287 323 997**	**16 745 527**	**66 702 384**	**370 771 909**
Հունվար	117 975 601	4 452 298	16 204 081	138 631 980
Փետրվար	70 386 822	5 668 554	23 116 881	99 172 257
Մարտ	98 961 574	6 624 676	27 381 422	132 967 672

*Հարկերի միասնական հաշվի մուտքերում հաշվի են առնվել վերահաշվարկները և ճշտումները

Աղյուսակ 5.1
(հազ.դրամ)

Բյուջեի եկամուտներից կատարված վերադարձները.

Ամիս	Անցումային գերավճարից վերադարձ հարկատուներին	Դեբետային գերավճարից վերադարձ հարկատուներին, այդ թվում՝ ՊԵԿ եզրակացությունների	Վարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված	ԱԱՀ-ի վերադարձ (Tax free)	Այլ ելքեր	Ընդամենը հարկերից վերադարձների գումարը

		համաձայն վերադարձված	տոկոսներ			
Ընդամենը	**19 618**	**32 786 728**	**4 566 996**	**69 744**	**434 405**	**37 877 491**
Հունվար	0	7 267 660	626 053	11 874	221 758	8 127 344
Փետրվար	14 205	14 510 153	3 235 309	34 721	123 197	17 917 584
Մարտ	5 413	11 008 915	705 635	23 150	89 449	11 832 563

2021թ. 3 ամիսների արդյունքներով պետական բյուջե զուտ մուտքերը՝

Աղյուսակ 5.2
(հազ.դրամ)

Ամիս	**Հարկային եկամուտներ և պետական տուրքերի գումարը**
Հունվար	130 504 636
Փետրվար	81 254 673
Մարտ	121 135 109
Ընդամենը 2021թ. 3 ամիսներ	**332 894 418**

V. 2021 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐՈՒՄ ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԼՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հավելված
Հաստատվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի
2021թ. -ի թիվ որոշմամբ

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարկային և մաքսային ծառայություններ ծրագրի շրջանակներում հարկային և մաքսային ծառայություններ միջոցառման մասով 2021թ. տարեկան ծախսերի համար 2021թ. պետական բյուջեով նախատեսվել է 21,397,634.4 հազ. դրամ գումար, իսկ տարեկան ճշտված ծրագրով՝ 20,963,509.4 հազ.դրամ:
2021թ. երեք ամիսների պլանը սահմանվել է 3,778,665.4 հազ. դրամ, ճշտված պլանը նույնպես կազմել է 3,778,665.4 հազ. դրամ, դրամարկղի ծախսը՝ 3,332,878.6 հազ. դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 445,786.8 հազ. դրամ:

Մասնավորապես՝ սույն միջոցառման շրջանակներում ծախսերը ունեն հետևյալ կատարողականները.

Աղյուսակ 6
(հազ.դրամ)

Ծրագիր (հոդված)	**2021թ. երեք ամիսների ճշտված պլան**	**Ֆինանսավորում**	**Դրամարկղի ծախսը**	**Փաստացի ծախս**	**Կատարման %-ը 6=4/2 x100%**	**Պլանի մնացորդ 7=2-4**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**
Ընդամենը	3,778,665.40	3,478,513.12	3,332,878.61	4,168,420.64	88.20	300,152.28
Աշխատանքի վարձատրություն	2,941,547.00	2,941,547.00	2,800,348.22	3,515,700.31	95.20	-
Ապրանքների, ծառայությունների ձեռքբերում և այլ ծախսեր	837,118.40	536,966.12	532,530.39	652,720.33	63.61	300,152.28

Աշխատանքի վարձատրության գծով փաստացի ծախսը կազմել է 3,515,700.31 հազ. դրամ, դրամարկղի ծախսը՝ 2,800,348.22 հազ. դրամ, աշխատանքի վարձատրության մասով երեք ամիսների վերջի դրությամբ կրեդիտորական պարտքը կազմում է 716,657.4 հազ. դրամ:

Աշխատանքի վարձատրության գծով ծախսի (դրամարկղի ծախսի) կատարողականը երեք ամիսների ճշտված ծրագրային ցուցանիշի նկատմամբ կազմել է 95.2 %:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերումների և այլ ծախսերի գծով ծախսերի կատարողականը կազմել է 63.6 %:

2. ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

Ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների ձեռքբերման միջոցառումների շրջանակներում կատարված ծախսերի ցուցանիշները հետևյալն են.

Աղյուսակ 7
(հազ.դրամ)

Ծրագիր (հոդված)	**2021թ. երեք ամիսների ճշտված պլան**	**Ֆինանսա վորում**	**Փաստ**	**Փաստացի ծախս**
1	**2**	**3**	**4**	**5**
Ընդամենը	**2,524,032.00**	**0.00**	**0.00**	**964,130.54**
Ակցիզային դրոշմանիշների ձեռքբերում	1,163,232.00	-	-	166,049.07
Դրոշմապիտակների ձեռքբերում	1,360,800.00	-	-	798,081.47

Նշված ծրագրերով ձեռքբերումներ և վճարումներ չեն կատարվել, հաշվետու ժամանակաշրջանում օգտագործվել են նախորդ տարվա վերջի դրությամբ պահեստավորված ակցիզային դրոշմանիշները և դրոշմապիտակները, որոնց մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմել է համապատասխանաբար՝ 826,105.7 հազ.դրամ և 2,411,882.9 հազ.դրամ:

3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հավելված
Հաստատվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի
2021թ. -ի թիվ որոշմամբ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում միջոցառումով 2021թ. տարեկան և երեք ամիսների ճշտված պլանները կազմել են համապատասխանաբար 2,480,100.0 հազ. դրամ և 75,922.0 հազ.դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆինանսավորման և դրամարկղի ծախսի չկատարումը հիմնականում պայմանավորված նրանով, որ մատակարար կազմակերպությունները վճարման փաստաթղթերը ներկայացրել են նախատեսված ժամկետից ուշ՝ ապրիլ ամսին:

4. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձաքննությունների ծառայությունների միջոցառումով 2021թ. երեք ամիսների պլանը կազմել է 1,084.7 հազ. դրամ, դրամարկղի և փաստացի ծախսերը՝ 320.9 հազ.դրամ: Պլանավորված և փաստացի ծախսված գումարների տարբերությունը կազմել է 763.8 հազ.դրամ, ինչը պայմանավորված է փորձաքննությունների ծառայությունների փաստացի անհրաժեշտության նախատեսվածից պակաս լինելու հանգամանքով:

5. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ (COVID-19) ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ 23-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման 23-րդ միջոցառման շրջանակներում նախատեսվել է օժանդակել զբոսաշրջության ոլորտում գործունեություն իրականացնող շուրջ 1500 տնտեսվարողների, որի համար 2021թ. պետական բյուջեի տարեկան և երեք ամիսների ճշտված պլաններով նախատեսվել է 1,124,700.0 հազ.դրամ գումար: Սույն միջոցառման շրջանակներում փաստացի և դրամարկղային ծախսերը կազմել են 1,114,680.9 հազ.դրամ, ինչը պայմանավորվել է այն հանգամանքով, որ աջակցություն ստանալու նպատակով փաստացի դիմել է 1158 շահառու:

6. ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումների գծով ծախսերը կազմել են 26,328.38 հազ. դրամ, կատարողականը կազմել է 100 %:

7. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստում միջոցառման շրջանակներում ծախսերի կատարողականը կազմել է 100 տոկոս: Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղի ծախսերը կազմել 35,620.0 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 31,990.9 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում նախատեսվել է թվով 505 հարկային և մաքսային ծառայողների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ (թվով 10 դասընթաց 41 ուսումնական խմբերով): Վերապատրաստումները իրականացվել են պլանավորված դասընթացների և ուսումնական խմբերի քանակներին համապատասխան, սակայն COVID-ով պայմանավորված մասնակիցների թվաքանակը նվազել է 285 ծառայողով՝ կազմելով 220 մասնակից:

8. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ

Կենշաթոշակային ապահովություն ծրագրի շրջանակներում կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին միջոցառման մասով 2021 թվականի տարեկան և երեք ամիսների ճշտված պլանները կազմել են համապատասխանաբար՝ 57,645,348.2 հազ. դրամ և 22,383,434.0 հազ. դրամ: Դրամարկղի և փաստացի ծախսերը կազմել են 22,372,642.4 հազ.դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմել է 10,791.6 հազ. դրամ: Մասնակիցների պլանային թվաքանակի (325,410 մարդ) համեմատ փաստացի ցուցանիշը՝ համաձայն ՊԵԿ SS ստորաբաժանման ամփոփած տվյալների՝ կազմել է 375,983 մարդ կամ 50,573-ով ավելի:

9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Սոցիալական փաթեթների ապահովում ծրագրի շրջանակներում ՊԵԿ աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար 2021թ. պետական բյուջեի տարեկան և երեք ամիսների ճշտված պլանները համապատասխանաբար կազմել են՝ 225,864.0 հազ. դրամ և 35,760.0 հազ. դրամ: 2021թ. երեք ամիսների

դրամարկղի ծախսը կազմել է 31,206.0 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմել է 4,554.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 12.7%-ը:

Շահառուների նախատեսված թվաքանակը կազմել է 2980, սակայն սոցիալական փաթեթից օգտվել են 2600 աշխատակից՝ նախատեսվածից 380 աշխատակցով պակաս, որը պայմանավորված է աշխատողների աշխատանքի ընդունման վեց ամիսը լրացած չլինելու և շահառուների ցանկում չընդգրկվելու, ինչպես նաև ոմանց կողմից դիմումներ չներկայացնելու հանգամանքներով:

10. ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասով 2021թ. պետական բյուջեի երեք ամիսների ճշտված պլանը, ֆինանսավորումը, դրամարկղի և փաստացի ծախսերը կազմել են 5,092,334.2 հազ. դրամ:

Վճարումները կատարվել են ՊԵԿ SS ստորաբաժանման կողմից տրամադրված՝ փաստացի վճարումների անհատականացված տվյալների հիման վրա:

11. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ 5-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Միջոցառումով նախատեսվել է կորոնավիրուսի տարածման հետևանքով ՀՀ առանձին տնտեսավարողների (մինչև 20000 սուբյեկտ) մոտ առաջացած դժվարությունների հետևանքով աշխատատեղերի պահպանության, որի նպատակով 2020թ. նախատեսվել է 2,200,000.0 հազ.դրամ գումար: Միջոցառման շրջանակներում աջակցություն ստանալու նպատակով փաստացի դիմել է 13928 տնտեսվարող սուբյեկտ, որոնց գծով ֆինանսավորումը կազմել է 2,199,791.57 հազ.դրամ, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 2,165,533.60 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 98.43%: Տարբերությունը կազմել է 34,466.40 հազ.դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ աջակցություն ստանալու նպատակով դիմող շահառուների քանակը նախատեսվածից քիչ են կազմել:

Հավելված
Հաստատվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի
2021թ. -ի թիվ որոշմամբ

VI. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

VII. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

VIII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության արդյունքում անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից առաջարկություններ չեն ներկայացվել:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ՝

Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ